ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՈՒՇԱԳԻՐ
Սիթի օֆ Սմայլ բարեգործական հիմնադրամի
և
ԲԿՄԱ ֆուտբոլային ակումբի միջև

Մտադրությունների մասին սույն հուշագիրը (այսուհետ՝ «Հուշագիր») ստորագրվում է Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) և ԲԿՄԱ ֆուտբոլային ակումբի (այսուհետ՝ ԲԿՄԱ) միջև, այսուհետ միասին՝ «Կողմեր»:

Հուշագրի շրջանակներում ԲԿՄԱ ֆուտբոային թիմը մեկ տարվա ընթացքում անհատույց պարտավորվում է կրել թիմի շապիկները հիմնադրամի տարբերանշանով (լոգոյով):

Սույն հուշագրի նպատակը և հիմնական խնդիրներն են՝

- Իրազեկել հանրությանը հիմնադրամի գոյության և գործունեության վերաբերյալ,
- Բարձրացնել հիմնադրամի ճանաչելիությունը
- Նպաստել բարեգործության մշակույթի զարգացմանը հանրության շրջանում

Կողմերը կարևորում են համագործակցության շրջանակի սահմանումը և փոխգործակցությունը՝ ընդհանուր նպատակների շրջանակներում՝ ոչ բացառիկ հիմունքներով:

Կողմերը համաձայնում են աշխատել միասին՝ փոխադարձ վստահության և համագործակցության ոգով:

Կողմերը համաձայնում են շարունակաբար փնտրել և ամրապնդել համագործակցության նոր ուղիներ:

Կողմերը համաձայնում են, որ համագործակցությունը չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն կողմերից որևէ մեկի համար:

Կողմերը համաձայնվում են հետևյալի մասին.

- Յուրաքանչյուր Կողմ պատասխանատու է սույն Հուշագրի և դրա իրագործման հետ կապված գործողությունների ու բացթողումների համար:

Կողմերը դիտարկում են հետագա համագործակցության հնարավորությունները՝ գործընկերությունը հաստատելու նպատակով:

Կողմերն ընդունում են սույն Հուշագրի սահմանափակ լինելը վերը ներկայացրած շրջանակներում և այն, որ Հուշագիրը Կողմերի համար հետագա լրացուցիչ պարտավորություն չի առաջացնելու:

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրումից հետո և վավեր է 1 տարի ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի հրաժարվել Հուշագրից՝ 30 օր առաջ նախապես գրավոր ծանուցելով մյուս կողմին:

Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել, թարմացվել կամ դադարեցվել ցանկացած ժամանակ՝ փոխադարձ համաձայնությամբ:

Կողմերից և ոչ մեկը մյուս կողմի ներկայացուցիչը կամ գործընկերը չի կարող համարվել: Կողմերից և ոչ մեկը մյուս կողմի անունից չի կարող ներգրավվել որեւէ այլ պայմանագրի կամ պարտավորության մեջ և պատասխանատվություն է ստանձնում բոլոր հանձնառությունները կատարել բացառապես սեփական միջոցներից՝ ինչպես նշված է սույն Հուշագրում:

Կողմերը գիտակցում են, որ փոխադարձ համաձայնությունները պետք է հրապարակվեն և, հետևաբար, ընդունում են սույն համագործակցության շրջանակներում հրապարակվող տեղեկատվական փաստաթղթերի մեջ տեղ գտած յուրաքանչյուր կողմի դերը և ներդրումը, համաձայնում են այդ փաստաթղթերում օգտագործել յուրաքանչյուր կողմի անվանումը և խորհրդանիշը՝ ըստ կողմի հաստատված քաղաքականության, որը պետք է հաստատվի յուրաքանչյուր ստորագրողի նախնական գրավոր համաձայնությամբ:

Կողմերը կքննարկեն հետագա հնարավորությունները՝ համագործակցության ընդլայնման համար:

Ստորագրված է

Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամի կողմից՝

Էպթեր Դեմիրճյան
տնօրեն
Ամսաթիվ՝ 04.08.2020

ԲԿՄԱ ֆուտբոլային ակումբի կողմից՝

Գագիկ Աղբալյան
տնօրեն
Ամսաթիվ՝ 04.08.2020